

ՄԵՐ ԳՅՈՒՏԵՐԸ ԴՐՍՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ

Հայաստանին ոչինչ չտալով

Հայաստանում պետբյուջեից գիտության ֆինանսավորումը վերջին տարիներին մնում է նույն մակարդակի վրա՝ ծախսային մասի մոտ 1%-ի չափով: Ուղղակի շնորհիվ բյուջեի ծախսային մասի շարունակական ավելացման, ավելացել են նաև գիտության ոլորտին տրվող գումարները: Եթե 2008թ. նշված ոլորտին հատկացվել է մոտ 7 մլրդ դրամ, ապա 2009թ.՝ մոտ 7,4 մլրդ, 2010թ.՝ մոտ 8,4 մլրդ դրամ, իսկ 2011թ. համար նախատեսվում է հատկացնել մոտ 9,5 մլրդ դրամ:

Բացի վերը նշված գումարներից, գիտության ոլորտը արտերկրից տարեկան մոտ 7 մլն ԱՄՆ դոլարի դրամաշնորհներ է ստանում, ընդ որում, դրանց զգալի մասը տրվում է գործընկերային ծրագրերի համար: Այնուամենայնիվ այդ գումարները, նույնիսկ միասին վերցված, դեռ բավարար չեն, որպեսզի մեր գիտությունը ոտքի կանգնի եւ տա ակնկալվող արդյունքը:

Այս եւ գիտության ոլորտին առնչվող այլ խնդիրների շուրջ է մեր հարցազրույցը ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ հետ:

-Ի՞նչ կարող եք ասել գիտության ոլորտի ֆինանսավորման վերաբերյալ:

-Վերջին տարիներին էապես վերանայվել է գիտության ոլորտում ծախսվող գումարների բաշխման քաղաքականությունը: Առաջ տպավորությունն այնպիսին էր, որ գիտության ոլորտի գումարներն ուղղակի սոցիալական խնդիրներ լուծելու համար են նախատեսված: Գումարների մոտ 85%-ը տրվում էր աշխատավարձի ձեռով, եւ տակը բան չէր մնում, որպեսզի ինստիտուտները կարողանային լիարժեք աշխատել, ջեռուցման, էլեկտրաէներգիայի, հեռախոսակապի վարձերը վճարելին, տանիքը վերանորոգելին եւ այլն: Տնտեսական եւ այլ ծախսերն այնքան չնչին էին, որ ոչինչ հնարավոր չէր անել:

Հիմա բյուջեի բաշխման ժամանակ շատ-շատ բաներ հաշվի են առնվում: Մենք տնտեսական եւ այլ ծախսերի համար տրվող ֆինանսավորումն ավելացրինք 2,5-3 անգամ, եւ այսօր մեր բոլոր ինստիտուտները ջեռուցվում են: 1992-2007 թվականներին ձմռան շրջանում որոշ հիմնարկներ մոտ կես տարի հարկադիր պարապուրդի մեջ էին, չէին աշխատում: Առաջ ինստիտուտներում աշխատավարձերը հաճախ ամիսներով չէին ստանում, հիմա մեկ օրով չի ուշանում:

Նախկինում բյուջեում չի եղել գիտաժողովների ֆինանսավորման տող: Այս վերջին 2 տարում փաստորեն մոտ 60 միջազգային գիտաժողովներ ենք ֆինանսավորել Հայաստանում:

Այսինքն՝ գիտական կապերն արտերկրի հետ միայն ստորագրված պայմանագրերով չեն, շատ կարելի է նաև գիտնականների անձնական շփումները: Մենք վերջին 2 տարում մոտ 100 գիտնական ենք գործուղել՝ միջազգային գիտաժողովներին մասնակցելու:

-Ե՞րբ է լուծվելու գյուտերի, հայտնագործությունների միջազգային պատենտավորման խնդիրը:

-Այդ ծանր խնդիրն իրոք կա: Ե՛վ հեղինակային իրավունքի հետ կապված խնդիրներ ունենք (օրենքում համապատասխան փոփոխություններ ու լրացումներ պետք է կատարել), ե՛լ գյուտերի միջազգային պատենտավորման: Հայաստանում գյուտերի պատենտավորում կատարվում է, բայց շատ ցածր մակարդակով: Շատ կարելի է, որ գյուտերի, հայտնագործությունների հեղինակային իրավունքների հետ կապված խնդիրը միջազգային մակարդակով լուծենք, որովհետև արդեն անկախ պետություն ենք:

Մեր ցանկացած հայտնագործությունից եւ գյուտից պետությունը պետք է փորձի շահույթ ստանալ, իսկ շահույթ կստանա այն ժամանակ, եթե դրանց վերաբերյալ ունենանք միջազգային պատենտներ: Այդ պատենտները ստանալու համար պետք է մեծ գումարներ վճարել: Կախված նրանից, թե ինչ գյուտ կամ հայտնագործություն է միջազգային պատենտի հավակնում, դրանք ստանալու համար պետք է մեծ գումար՝ 20000-60000 դոլար վճարել:

Այսօր մեր ինստիտուտներն ի վիճակի չեն վճարել նման գումարներ, որպեսզի իրենց աշխատակիցների գյուտերը կամ հայտնագործությունները կարողանան պատենտավորել: Ռանձանակում է, որ տվյալ գյուտը կամ հայտնագործությունը դրսում կարող են հեշտությամբ օգտագործել, շահույթ ստանալ եւ Հայաստանին կամ տվյալ գիտնականին որեւէ գումար չվճարել: Սա հիմնախնդիր է, որը պետք է լուծել: Մենք պետբյուջեում, համեմայն դեպս, միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսել ենք գումարներ՝ 2012 թվականից տարեկան գոնե 2-3 գյուտերի, հայտնագործությունների միջազգային պատենտավորումը ֆինանսավորելու համար:

-Ի՞նչ վիճակում է հայագիտության ֆինանսավորումը:

-Այդ ոլորտում նախկինում ծախսվող գումարները մենք ավելացրել ենք 3-4%-ով, եկող տարի 3-4% ավելի գումար կստանան: 2008թ. հայագիտության ոլորտը ֆինանսավորվել է գիտության ամբողջ բյուջեի մոտ 8,9%-ի չափով, 2009թ.՝ 10%-ի, 2010թ.՝ 11%-ի չափով, եկող տարի նախատեսել ենք հայագիտության վրա ծախսել մեր դրամաշնորհային եւ բազային ծրագրերի մոտ 14%-ը, որը բավական լուրջ գումար է:

-Որո՞նք են հայրենի գիտության զարգացման գերակայությունները:

-Հայագիտություն, հումանիտար եւ սոցիալ-տնտեսագիտական գիտություններ, գիտություններ կյանքի մասին: Սա բավական ընդարձակ ոլորտ է, որի մեջ մտնում են մոլեկուլային կենսաբանությունը, կենսաքիմիան, մոլեկուլային դեղաբանությունը, բջջի կենսաֆիզիկան, բժշկական որոշակի դիսցիպլիններ եւ այլն:

Գիտության զարգացման գերակայություններից են նաև վերականգնողական էներգետիկան, էներգիայի նոր աղբյուրների հետ կապված աշխատանքները, առաջատար տեխնոլոգիաները, տեղեկատվական տեխնոլոգիաները, տիեզերքի ուսումնասիրությունը, երկրի մասին գիտությունը, խնայողական բնօգտագործումը եւ, վերջապես, կարեւորագույն կիրառական հետազոտությունները խթանող հիմնարար հետազոտությունները: Սրանք են առաջիկայում մեր գիտության գերակայությունները:

-Ձեր կարծիքով, Հայաստանն ունի՞ մրցունակ գիտություն:

-Հիմնարար գիտության ոլորտում որոշ խնդիրների լուծման բնագավառում մենք մրցունակ ենք: Օրինակ, ֆիզիկայի ոլորտում (տեսական ֆիզիկա, միջուկային ֆիզիկա), աստղագիտության որոշակի, նեղ խնդիրների ոլորտներում մրցունակ ենք, որովհետեւ մեր հեղինակների նյութերը հրատարակվում են աշխարհի լավագույն, առաջատար գիտական ամսագրերում: Իհարկե, դա բավարար չէ: Մենք խորհրդային ժամանակներում շատ ավելի մրցունակ էինք, քան հիմա:

Չեմ ուզում արդարացնել այսօրվա վիճակը, բայց կան բազմաթիվ պատճառներ, օրինակ, ֆինանսական դժվարությունները: Խորհրդային ժամանակներում մեր հանրապետության գիտության բյուջեն, իմ ունեցած տվյալների համաձայն, տարեկան 450-500 մլն դոլար է կազմել, եթե ռուբլիները վերածենք դոլարի: Ի դեպ, խորհրդային տարիներին մեր գիտությանը հասկացվող գումարների 75-80 տոկոսը կիրառական գիտությունների վրա է ծախսվել: Հայաստանի Հանրապետությունն այսօր այդ հնարավորությունները չունի, եւ պետք էլ չէ այդքան շատ ծախսել:

Մեր խնդիրները փոխվել են, մենք փոքր երկիր ենք, սահմանափակ գիտակրթական տարածք ունենք: Ասածս, իհարկե, չի նշանակում, թե այն գումարները, որ մեր պետությունը տալիս է գիտության ոլորտին, բավարար են: Որպեսզի մենք Հայաստանում գիտական հետազոտություններից լիարժեքորեն կարողանանք ստանալ իրական արդյունք եւ ներդրումներ ունենալ, իմ հաշվարկներով, գիտության տարեկան բյուջեն 5-6 անգամ պետք է ավելի մեծ լինի, քան հիմա է:

Վ.ՈՍԿԱՆՅԱՆ